Փուճջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

Տարեկան բաժանորդագինն է երկու եւ կէս արծաթ Մեճիտ կանխիկ վճարելի, թէ՛ մայրաքաղաքիս եւ իր արուարձանաց եւ թէ՛ գաւառաց համար։

Վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

Տեղական եւ գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

Հատը 40 փարայ է, եւ կը գտնուի մասնաւորապէս Պաճճէ-Գաբու չրավաճառ եւ գրավաճառ Պօղոս եւ Յակոբ աղայից խանութները։

ՓՈՒՇՔ

Յանձնարարութեան տողը 3 դուրուշ է մէկ անգամի համար։ Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար։

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի առ Տճօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան կ. Պոլիս Գալըգ-բազար Նաճիյէ խան վերի յարկ թիւ 16։

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Arménien Pountch
—16 Nafié-Han, Balouk-Pazar 16—
CONSTANTINOPLE

ԹԻՒ 2103 — ԵՒ Ս. Բ Ս. Թ — 1888 ՅՈՒՆԻՍ 18

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՇՔԻ

Հայրենասիրութիւն գաւառաց ամենից աղգայնոց համար օրինակելի վարմանց մէջ դանուեցան վերջապէս։ Ինչպէս ուրախութեամբ կաւետեր նախորդ թերթով հրատարակեալ նամակ մը, յիշեալ գիւղի աղգայինք՝ բաւական ժամանակ մեկմեկու դէմ խռովութեամբ ու ատելութեամբ վարուելէն, և միմեանց և իրենց եկեղեցւոյն ու վարժարանին բաւական ջլատելէն ետքը հուսկ ուրեմն արթնցան, հայրենութեան ձեռք տուին միմեանց, թաղային վարչութիւն հաստատեցին, վարժարանի համար հոգաբարձութիւն կարգեցին, և ահմանադրութեան տարեդարձի հանդէս կատարեցին։ Ուրիշ գիւղորէից և քաղաքաց մէջ դանուած մեր խռովեալ և երկպառակեալ աղգայինք ալ պարտին այսպէս ի հաշտութիւն և ի միաբանութիւն դառնալ, և ամենայն սիրով աշխատիլ իրենց եկեղեցւոյն պայծառութեան և վարժարանին բարեկարգութեան ու յառաջիմանալուն համար։ Աւելորդ կը համարիմք ճառեր յօրինել սիրոյ և միաբանութեան մեծամեծ բարեաց, և ատելութեան ու երկպառակութեան բազմադիմի ձգասուց ու չարեաց վերայ։ Բայսանի իսկ են։ Նաև աւելորդ կը համարիմք դիտել թէ երբ ժողովրդ մը իւր մէջ բաժանեալ և երկպառակեալ է, օտարը նորա մէջ դիւրաւ կը մտնէ և կը գործէ ըստ հաճոյս։ Տեսէ՛ք, ո՛ւր որ երկպառակութիւն և խռովութիւն կայ Հայոց մէջ, կրօնական որսորդք ծուխ ղարնելով կը մխին անդ, և ըստ ամենայնի ջանահնար կը լինին՝ Հայ ժողովուրդն առաւել եւս խռովելու աղմկելու համար, որպէսզի առանց դժուարութեան յաղթողին որսալ և պարծիլ ի շահ անձանց։ Մեր եկեղեցական Հարք եթէ առհասարակ ճանաչէին իրենց պարտաւորութիւնները և սրտի ու խղճի մուօք կատարելու ջոյթ տանէին, մեք այսչափն իսկ դրելու հարկին մէջ չէինք դանուեր. բայց դժբաղդաբար նոցա մեծ մասն իրենց սրբազան կոչման ու նուիրական ուխտին հակառակ ընթացից մէջ կը դանուին, և ե՛ն որ վտանգաւոր խռովութեան հուրն ջիջուցանել աշխատելու, կարծարծեն։ Ի դաւառս, աղգային երևելեաց խոհուն մասն ալ պարտի անտարբեր չդանուիլ երբ խռովութեան ծագումն կը տեսնուի աղգայնոց մէջ, և անկեղծ աղգասիրութեամբ ջանալ որ խռովութիւնը չարձարձած մարի։ Ս. յայսպէս կընեն մեղ քնակակից աղգայ ողջախոհ կղերն ու երևելիք, և թոյլ չեն տար որ այս կամ այն պատճառաւ եղբայր եղբօր դէմ երթեն և զանազան ձգասուց տեղի տան։

(Թղթակցութիւն փունջի)

Ռուսճուք. 14 Յունիս 1888։ – Լըբաղլոյդ 2100դ. թուղթն մէջ Մ. Թիւթինճիէֆի առորագրութեամբ տեղւոյս Աղբատասիրաց ընկերութեան ընթացքի վրայ մի քանի տեղեկութիւններ տրուած էր։ Այդ երաւացի և ճշմարիտ եղելութիւնները սխալ և սուտ ըլլալը լրագրոյդ 2102դ թուղթն մէջ Յ. Եղիազեան անուն մի պատանի երէց կը պաշտպանէ իւր քեռայրն Նաւասարդ Ա. յտնեանը, ըսելով թէ նորա եղբայրները կարօտ չեն այլ կօգնեն կարօտաց։ Մենք Բուսճուգի ըլլալով՝ կը վկայեմք թէ Ն. Ա.ի եղբարց մին ընկերութեան դրամովը ամուսնացած է. և մեսն ալ ընկերութեան դրամովը Պուքրէշ դացած է դարմանուելու համար։ Արդեօք ո՛ր կարօտելոց օգնած են այս երկու պարոնները, մինչդեռ վարժարանի համար 5 դրամ չեն տար։ Պ. Թիւթիւնճիէֆի դրութեան համար պէտք է ուրիշները վկայեն թէ սադդէ չէ, ոչ թէ Ն. Ա.ի աղդականը։ Մինչև յարդ ի՞նչ որ գրուած է լրագրոյդ մէջ Պ. Թիւթիւնճիէֆի ստորագրութեամբ, բոլորն ալ իրաւ և արդար են։

(12 տողէ ջնջուեցաւ)

Սամսուն. 28 Մայիս 1888։ – Անցեալներն 15,000 ոսկի պարտքով անանկացեալ Եէլքէնճի օղլուն՝ որ տեղւոյս Թուրք վաճառականներէն էր, չավուշլանց դինուորութեան գոհ գնաց՝ կամուտածահար լինելով։ Ցաւալի է որ պարտատէրց ամենքն ալ Հայ են, և մանաւանդ անոնցմէ ոմանք այս պատճառաւ իւրեանց բոլոր ունեցածը կորուսած և ի չքաւորացած են։ Դարձեալ, մի քանի օր առաջ յիշեալ անձին աղգականներէն պատանի մը ծովը ինկնալով խեղդուելու մօտ էր. բայց հոյ նաւաստիի մը չնորհիւ մնաղապուր ազատեցաւ։

Պրուսլէն Ն. Եպտ. 3 Յունիս 1888։ – Այս տարի ևս, ըստ սովորութեան, Մայիսի 30 ին չորեքշաբթի օր տեղի ունեցաւ Եէնիքէյը Տէյ անուանեալ հանդէսը Պրուսլեայ Կրին Ուտ կոչուած հռչակաւոր մեծ դերեզմանատան մէջ։ Այս տօնը Ամերիկայի վերջին Սաուրթի պատերազմին մէջ մեռեալ զինուորաց յիշատակին համար է։ Ցառաւօտուն ժամը 10 ին սկսան ամէն կողմերէ հազարաւոր ժողովուրդ, արք և կանայք, երթալ յիշեալ դերեզմանատունը. հետզհետէ բազմաթիւ զինուորաց խումբեր ողբաձայն նուագարանաներով ու հին և նոր դրոշակներով ու թանկագին ծաղիկներով լեցուն կառքերով (ասոր ինչպէս ամէն կանոնները զիջան նոյնպէս և ծաղիկը չատ սուղ է) գնացին ի կրին Ուտ։ Հանդէսը սկսաւ կէս օրին մօտ և ճառախօսութիւնք տեղի ունեցան քսէ զինուորաց բրդաձեւ կճեայ մահարձանին մօտ։ Այս մահարձանն ի յիշատակ Նիւ-Եորքէն նուիրած են որ խիստ նշանաւոր է իւր թափօրաւ արձաններովն ու պղնձեայ պատկերագործ տախտակներովն. այս պատկերներէն միսյն վրայ կը տեսնես որ քսէ զինուոր մը պատրաստ՝ ձիուն երանաւէտներէն բռնած պիտի երթայ պատերազմի. կինը ձեռքերէն բռնած կողբայ. իսկ փոքրիկ որդիքն իրենց հօրը քղանցքներէն բռնած թող չեն տար որ երթայ. կը դոչէ՛ զինուորը. «այո՛ պէտք է որ երթամ և ազատեմ ինձ նմանները արարածներն՝ որ դերի են, միայն սև ծնած լինելնուն համար,» ևլն։ Հետզհետէ թանկագին ծաղիկները սփռեցին գամբանները վրայ. յետոյ, ժամը 3 ին՝ դերեզմանատան պաշտպան հռչակաւոր Պիչըրի (անգլեալ տարի մեռաւ) չիրեմը գնացին։ Սորա քոյրը՝ Պիչըր Սթոյ տիկինն Ափսալ Թոմմասի Տնակը անուն գրքոյն հեղինակն է՝ որոյ հայերէնն ալ թարգմանուած է Վենետիկի բազմարդիւն վանքէն. սորա դերեզմանին վրայ ալ ծաղիկները սփռեցին, և այսպէսով վերջացաւ հանդէսը գրեթէ ժամը 5 ին։ Տեսնելու արժանի էր այս հարիւր հազարներով խառն ի խառն բազմութեան մէջ տիրած բարեկարգութիւնն. երբէք մէկը ծաղիկ մը չէր բրցըներ. եթէ մէկը ծաղիկ մը բրցընէ, և ուրիշ մը զայն տեսնելով դերեզմանատան վարչութեան լմաց տայ՝ իսկոյն 100 ռուբլար նուէրը կընդունի։ Այսպէս պարտէզին մէջ կախուած ծանուցումներ կան։ Դարձեալ, Մայիսի 30 ին մեծ հանդէս մը ևս տեղի ունեցաւ ի Պրուքլին՝ Պէյֆօրտ Ավենիւ թիւ 499 Մբսաբը Մարվեր Բրօսըն երևելի հարուստին տունը, ուր հրաւիրուած էր Ամերիկայի նախագահ Ռիչըվանտ և այլ երևելի անձինք։ Առաւօտուն նախագահն, երեք երևելի անձանց հետ, պարզ բայց վայելուչ կառք մը հեծած՝ դնաց վերոյիշեալ անձին տունը. երկուստեք փողոցները խուռն բազմութեամբ լցուած էին. նախագահն անդ տեսնաբանութիւն մը ըրաւ, և բազմեցաւ ի գլուխ չքեղ և մեծածախս սեղանին. ապա կեցցէներու աղաղակաւ մեկնեցաւ։ Ս.յս անգամ ևս յոյս կայ որ կրկին նախագահութեան քուէ պիտի չահի Պ. Ռիչվանտ։ – Պէտք է դիտնալ որ վերոյիշեալ դերեզմանատան շինութեան համար միլիոններ ծախք եղած են, և քանի մը ժամ պէտք է մէջը կառքով պըտըտելու համար, որ բազմաճիւղ փողոցներու բաժնուած է. մեծածախս դամբանները կան կոթիկ, գմբեթեայ և այլն։ Մանաւանդ քարուկրը կճեայ քարայրներ ալ կան զատ զատ հարուստ ընտանեաց համար՝ ոսկեզօծ պղնձապատ դռներով ու հին դարերու ճարտարապետութեամբ։ Դերեզմանատան մեծ դրունք չատ հոյակապ են և իւ՛ր ձանօք։

Պոսթոն. 8 Յունիս 1888։ – ԼՈՒՍԱՆԿԱՐՔ։ – Լուսանկարչութեան արուեստը մեր Աղգայնոց մէջ այն աստիճան յառաջդիմութիւն ըրած է և իրենք այնպէս նախանձելի դիրք մը բռնած են սոյն արուեստի մէջ որ իրօք յանդգնութիւն մը պիտի ըլլար մեղ, եթէ փորձէինք կենդանագիրներու վերայ տեսութիւն մը ընել. ուստի կը յուսամք թէ աղնիւ ընթերցողն մեր նամակի վերնագիրն տեսնելով չը կարծէ թէ մեր նպատակն է ճառել նիւթի մը վերայ որ մերայնոց մանագիտութիւնն է արդէն, որով այնչափ համբաւ ստացած են թէ՛ Կ. Պոլսոյ և թէ՛ ուրիշ քաղաքներու մէջ ի զարմանս օտարազգաց և ի պարծանս մեղ Հայոց։ Ս.յսչափն յիշելէ վերջ անցնինք բուն մեր նպատակին որ մեր այս նամակի և վերնագրի չարժառիթն եղած է և այն է ծանուցանել ինչ որ մեք վերջին օրեր առաջին անգամ տեսանք լուսանկարներու վերայ եղած յաւելուածներ, որոց մով կենդանագիրը առնուած մի անձի բոլոր յատկութիւններն միանգամայն նկարագրուած էին պատկերին քով. անանկ որ երբ պատկերը ձեռքդ կառնես և կը դիտես անձ մը որ ծանօթ կամ անծանօթ է քեղ, կարող կըլլաս նաև դիտնալ թէ սոյն անձ ի՛նչ բնաւորութեան տէր է, ի՛նչ յատկութիւններ ունի, ի՛նչ կոչում և կամ ի՛նչ վաճառականութիւն ունի ևլն։ Ահա պատմենք մեր տեսածը, որ ոչ այլ ինչ էր բայց եթէ պարզ կենդանագիրներու յատուկ ալպէօմ մը սա՛ տարբերութեամբ սակայն որ ալպէօմի իւրաքանչիւր երեսին վերին ձախ կողմը փոքրիկ տեղ մը միայն կըռնէր բուն լուսանկարը $2\frac{1}{2} \times 3\frac{1}{2}$ մասնաչափ մեծութեամբ. իսկ ալպէօմի իւրաքանչիւր թերթի մնացեալ մասերն տպեալ և ոսկեզօծ դրերով հետաւեալ հարցերն տպած էին. ըստ բաւականին աղատ տեղ թողուած ըլլալով ո՛ր կարող ըլլայ դրել պատասխաններն լուսանկարի կենդանի տէրն, այր թէ կին։ Ահա սոյն հարցերու ցանկը որոց իւրաքանչիւրին պատասխանելու է այն անձ որ իւր կենդանագիրը կուտայ իւր բարեկամին ալպէօմի մէջ պահելու համար։ Ի՞նչ դոյն կսիրես. ո՛ր ծաղիկն չատ կը սիրես. ո՛ր ծառն. օրուան ո՛ր ժամը. տարւոյն ո՛ր եղանակն. անուշահոտ իւղերէ ո՛րն. թանկագին քարերու մէջ ո՛րն. գեղեցկութեան ո՛ր տեսակը. արանց և կանանց անուններէ ո՛րոնք. ո՛ր նըկարիչն կզմայլիս. ո՛ր երաժիշտը. քանդակագործի ո՛ր հրաշակերտը. բանաստեղծ և բանաստեղծուհիներու մէջ ո՛րն. արձակ գրող հեղինակաց մէջ ո՛րն. վիպասանաց, պատմութեանց մէջ դո՛վ կսիրես. մեկ ժամու չափ կարդալու համար ի՛նչ գիրք կը նախընտրես. գրպանիդ մէջ ո՛ր գիրքն է որուն հետ կապուած ես անբաժանելի կերպով (կրօնական գիրքերէ զատ). ո՛ր դաւրուն մէջ ապրիլ կուզէիր. ո՛ւր քնակկի կը փափաքէիր. ի՛նչ տեսակ զբօսանքէ կախորժիս. ի՛նչ տեսակ աշխատութիւն կսիրես. մարդկան կամ կանանց բնաւորութեանց ո՛րը կզմայլիս. արանց և կանանց քնաւորութիւններէ ո՛րն կուզես. եթէ դու լինել չես ուզեր, ո՛վ լինել կփափաքէիր. երջանկութիւնն ի՛նչ է. թշուառութիւնն ի՛նչ է. դու պիտ նո՛ւաղիր ի՛նչ է. գիշերները ի՛նչ կերազես. ի՛նչ տեսակ խաղ կսիրես. ի՛նչ է քու նշանաւոր յատկութիւնդ. ի՛նչ է քու կիսոդ նըշանաւոր յատկութիւնը (եթէ ամուսնացած ես). ո՛րն է ամենավսեմ փափաքն որ մարդկային բնութիւնը կցանկայ. աշխարհի մէջ ամենէ քաղցր հնչող բառը ո՛րն է. ամենատխուր հնչող բառն ո՛րն է. այս կենաց մէջ ի՛նչ է նպատակդ. ի՛նչ է քու նշանաբանդ։ Սոյն հարցեր՝ ինչպէս որ կերևնան, բաւական են ապացուցանել թէ ալպէօմին մէջ սոցա պատասխանող անձն ի՛նչ աստիճանի մարդ է. անանկ որ բոլորովին անծանօթ մի անձի կենդանագրոյն քովը եթէ տեսնես սոյն հարցերու պատասխաններն, կարող կըլլաս գուշակել սոյն անծանօթի թէ՛ ընկերական և թէ՛ մտաւորական վիճակի կարևորութիւնը։ Բայց լուսանկարներու յատուկ ալպէօմներու մէջ սոյնօրինակ հարցմանց տրուած պատասխաններու մէկ քանիներն եթէ ուսումնասիրես, պարզ պիտի տեսնես մարդկան դիմաց տարբերութեան չափ կարծեաց և խորհրդոց՝ ճաշակի և կոչման տարբերութիւն. օրինակի համար այն հարց թէ «եթէ դու լինդ չես ուզեր, ո՛վ լինել կփափաքէիր»։ մեկ մը պատասխաներ է թէ Աստուած ըլլալ կուզէի. մինչդեռ ուրիշ մը միևնոյն հարցման պատասխանելով ըսած է թէ ոչինչ ըլլալ չէի ուզեր. ալ ուրիշ մ՛ալ ըսեր է թէ Թուղուն ըլլալ կուզէի։ Նմանապէս՝ աշխարհի մէջ ամենէ քաղցր հնչող բառն ո՛րն է հարցի պատասխանած է մէկն թէ կին բառն է քաղցրիկ հնչողը. այլ ուրիշ մը կըսէ թէ հրեշտակ բառն է. ուրիշ մը ևս՝ ոսկի բառն է քաղցրիկն, կըսէ։ Եւ այս կերպով բոլոր հարցեր գը-

(*) Տե՛ս թիւ 2102

Ե.

ՅԱԿՈՎԱՍՈՏՈՄՈՍ ԴԱՇՈՒՆՑ (*)

Մարտ դարձուածքներուն մէջ, որոնք ամէն օր կը ստեղծուին ու կ՚անհետանան, ամենէն ուրախալիներէն մէկն է՝ «Ես ալ ունեցայ իմ Ե.-ս»։ Ասիկա կը նշանակէ՝ ես ալ ունեցայ իմ յիշատակելի օրս, իմ պատմական վայրկեանս, երբ ես ալ ներկայ գտնուեցայ Յակոբ Յակոբեանի ներկայացման մը, որ ինքզինքը կը կոչէ «Ե.»։ Ես ալ ունեցայ իմ հպարտութեան պահս, երբ ես ալ կրցայ ըսել՝ «Ես ալ Ե.-ն տեսած եմ»։

Ամէն ոք իր կարգին, ես ալ ունեցայ իմ Ե.-ս։ Ես ալ տեսայ Ե.-ն։ Ես ալ կրցայ ըսել՝ «Ես ալ Ե.-ն տեսած եմ»

նմա յաջորդեց Կէօրէլէի Գայմագամ Մէհմէտ Լմլին Էֆէնտի։ – Նահանգին Ներկայացուցչական ժողովոյ Գայմագամ անուանեցաւ Ձէպելը Բիմէի նախորդ Գայմագամ Նէճիպ Էֆէնտի։ – Լինկուրիի նահանգին Ագաճ Մահմէտ դառնակին Գայմագամ անուանեցաւ Ղարպի Գարա աղաճի նախորդ Գայմագամ Մէհմէտ Իզզէթ Էֆէնտի։ – Գոնիայի նահանգին Գարաբէհնար դառնակին Գայմագամ անուանեցաւ Շէրնադի նախորդ Գայմագամ Ալի Նէմա Էֆէնտի։ – Առաջին տասիճանի Շէֆագաթի պատուանշան՝ Խայրէտտին փաշային անդրանիկ դստեր։ – Երկրորդ տասիճանի Շէֆագաթի՝ նորա երկրորդ ու երրորդ դստերց և Սէլանիկի կուսակալ Ղալիպ փաշային դստեր։

Նախարարաց ժողովը Օգոստ. Սուլթանի հաւանութեան մատուցած է տեղեկագիր մը՝ որով Գալաֆեան էֆէնտիի և ընկերաց արտօնութիւն պիտի արուի Վանայ ծովուն մէջ շոգենաւ բանեցընելու համար։

— Պէյրութի օսմանեան դեսպանն հեռագրեր է ի Բ. Դուռն թէ՝ Ռուսիոյ կառավարութիւնն ի մտադ նոր ձեռնարկութիւն մը պիտի քննէ մեծ տերութեանց մօտ ի կարդադրութիւն պուղարական խնդրոյն, և Գերմանիոյ կառավարութիւնն ալ պիտի օժանդակէ։

— Ըստ նոր վիճակագրութեան, Տրապիզոնի նահանգի ընդհանուր բնակչաց թիւն է 1,004,690։ Մահմետականք՝ 447162 արու և 384,461 էգ. յոյնք՝ 77,002 արու և 68,082 էգ. հայք՝ 21,953 արու և 18,934 էգ. բողոքականք՝ 635 արու և 623 էգ. օտարազգիք՝ 11,228 արու և 6,822 էգ. օտարահպատակք՝ 131 արու և 95 էգ։

— Յայտնի է թէ՝ ծովային պաշտօնատունն որոշած է՝ նոր դրութեամբ կառուցանել երկու ղրահատոր, և աւելի ամրացընել մարտանաւուց ղրահներն։ Այդ՝ ըստ սոյն որոշման, Աղիղիյէ՝ Մահմուտիյէ՝ Օսմանիյէ և Օրխանիյէ մարտանաւք Լոնտոն պիտի ղրկուին, ղրահներն ամրացընել տալու համար, և Աասրը-Թէվֆիգ մարտանաւը սոցա հետ պիտի ղրահարուի երբ և ծովակալն նաւ։

— Հաւանութեամբ կառավարութեան երկարեցաւ Զմիւռնիոյ երկաթուղեայ ընկերութեան արտօնութեան պայմանաժամն։ Ընկերութիւնը պիտի կրնայ 1 միլիոն 200 հազար ֆրանգի բաժնեթուղթ ի շրջաբերութիւն հանել։

— Բաղէշի նախորդ կուսակալ Ֆիքրի փաշա մեռաւ։

— Սէրայքէօյի, Ա.յալնի, Մանիսայի և Մէնէմէնի մէջ ու շրջակայքն յորդառատ անձրևներ տեղացեր են վերջին օրերս, և Սէրայքէօյի մօտէն անցնող գետակն յորդեր է։

— Զմիւռնիոյ յունական գերեզմանատան մէջ հայր մը ննջեցուցին սպաններ է անցեալ ուրբաթ իւր նորամեռիկ որդւոյն գերեզմանին վերայ, անդ ծնրադրեալ արտասուելէն ետքը։

— Պէչիկթաշ Փաշա-մահալլեսի բազանաց կից հրեայ մանրավաճառի մը խանութին մէջ գըտնուող լուցկիները կիսբակէ դիշեր բազանեցայ պատին չնորհիւ թենէն բռնկելով՝ խանութին մէջի վաճառքները բոլորովին այրեր են, առկայն շէնքն ապատեր է անյապաղ օգնութեան չնորհիւ։

— Ակնոյ ծխամաճառ խաչիկ անցեալ չաբաթ երեկոյ յանկարծամահ եղաւ իւր տան մէջ ի գիշերիկն։ Երկուշաբթի ալ Զադէգ-գափու Թաշ խանի մօտերն վաճառատեայ յոյն ջրատաճառ մը յանկարծ ինկաւ մեռաւ։

— Ի Խասգիւղ Թուղլաճի ճառկոզ Ապայի գործարանին մէջ աշխատող Մանուկ անուն նէյլէցի գործաւոր մը ծովուն մէջ խեղդուեցաւ լուացուելու ատենը։

— Կրետէի նախորդ կուսակալ Թոսիմաքի փաշային համար 10,000 ղրշ հանգստեան տոնաթոշակ որոշուեցաւ։

— Կայսերական հրամանաւ, Պ. Թուպինիի առաջնորդութեամբ կազմեալ դրամատուրց խումբ մը մտուեցաւ Սրպրենի հանքին շահագործման արտօնութիւնը։

— Պօլսոյ քաղաքապետ Մազհար փաշային միակ որդի Ռեամիլ պէյ՝ որ ժանտատենդէ կը տառապէր, երեքշաբթի առաւօտ մեռաւ ի հասակի 21 ամաց, և յուղարկաւորութիւնը կատարուեցաւ մեծ շուք հանդիսիւ ի ներկայութեան բազմաթիւ բարձրատոհմեան պաշտօնատարաց։

— Պէչիկթաշի Հայոց Մուխթար Աճիչէչմէլեան Պօլսոյ ազգ երկուշաբթի գիշերը յանկարծամահ եղաւ իւր տան մէջ։

— Ի Տէպէ-ագաճ Սրբուհեան երկաթուղեայ կայարանին վաճառաց դիւանին անօրէն Պ. Փիլիբէ երկուշաբթի երեկոյ ինքզինքն ըսպաններ է՝ ծովը նետուելով։

— Եգիպտոսի Խեդիվը որոշեր է՝ հանդերձ պարագայիւք քառասուն օր սուգ պահել Գերմանիոյ Ձրէտերիկ կայսեր մահուան առթիւ։

— Եւրոպական լրագրաց մէջ Գաղղիոյ ծխախոտի Ըմժիի վարչութեան մէկ պաշտօնական տզրդէ կայ, յորմէ կիմացուի թէ՝ 1888 Յուլիս 15/27ին եղմատան պաշտօնատան մէջ հրապարակաւ նուագաղրդ պիտի կատարուի Սամսանի ծխախոտի տերևներու գընման համար, որ երկու անդամին պիտի լինի և քանակութիւնն է չորս հարիւր հազար քիլոկրամ, Սամսանի տերև-ծխախոտ տարբին տեսակ, 1886 և 1887ի հունձքերէն։ Գնելի ծխախոտին օրինակներն ի տես դրուած են ի Փարիզ և ի Մարսիլիա, և այն վաճառականք որք կուզեն մասնակցիլ այսն նուագաղրդին, պարտին իրենց գրկեալ ծխախոտին օրինակներն որոշեալ օրին հասցունել ի Փարիզ, ծխախոտի վարչութեան բարձրադոյն ժողովոյն։ Յանձնառութեանց տեսրն պայմանագ կարելի է տեղեկանալ բայ ի Փարիզ և Մարսիլիայէ, Տրապիզոնի և Կ. Պոլսոյ գաղղիական հիւպատոսարանաց մէջ։

— Երեկ անգլիական Մուրհէյն շոգենաւուն մէջ մնուկ մը հրացան դանուելով Դալամիոյ մաքսատան յանձնուեցաւ։

— Պօլսոյ պատժական ատեանն հնգամեայ բանտարկութեան դատապարտեց կառապան մը, որոյ կառաց անուագ տակ ապագ մը ճնշած ու քիչ մը ետքը մեռած էր և մայրն ալ այս պատճառաւ խելագարած։ Դատաւորանն որոշեց նաև որ տղուն ընտանիքը կրօնական ատեանի դիմէ իր անհատական վնասուն փոխարինութիւն լնդդրելու համար։

— Մէյերկրականի անդղիական նաւատորմին առաջնիկայ ամսոյ լրիվն Ագէքսանդրիոյ նաւահանգիստը պիտի երթայ։

— Պիթ-Բաղարի մանեսահիներն Մուսթաֆա տղուն օրը պայտիտի չրջան սաւրչայ մեկնէն առնելու ատենն յանկարծամահ եղաւ։

ՕՍՄ. ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՐՄ

Օսմ. կայս. Պանքային բաժնետէրաց ընդհանուր ժողովը, որ անցեալ 27ին գումարուեցաւ ի Լոնտոն, որոշած է որ 10 չիլինի շահաբաժին մը վճարուի ամէն մի բաժնեվճարի համար։ Այս վճարումը պիտի կատարուի 1888 յուլիս 1 էն սկսեալ ի կէդրընատէվիս Պանքային ի Կ. Պոլիս, ի Լոնտոն և ի Փարիզ, ինչպէս և իւր միւս դործակալութեանց և մասնաճիւղերուն մէջ։ Թիւ 25 և 26 կոտրոններուն յանձնման փոխարէն։

Կ. Պոլիս, 28 յունիս։

ՆՈՐ ՀԱՄԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆԷԹԻՃԷԻ ՄԷՐԱՄ ԵՒ ՃԻՆԱՅԷԹ ՄԱՀՄՈՒԼ

Ինչպէս ծանուցած էինք նախորդ թիւերով, ազգագրական Պալէրեան Կարապետ էֆէնտի այս չաբթու ընկերասէր միտեղ հրատարակել յիշեալ երկու վէպերու թարգմանութիւնը տեար առ տեար։

Մրցագրութիւնս հակամէտ չէ առհասարակ ամէն վէպ մեծարդոյ ընթերցման ու քաջալերութեան մատուցանել։ սակայն տեսնելով յիշեալ վէպերուն ո՛չ միայն հետաքրքրական, այլև բարոյապից ու հրահանգիչ բովանդակութիւնն, և միանգամայն դոյզն ու ճարտար թարգմանութիւնն ի հայատառ թուրքերէն, ամենայն հաճութեամբ մեր ազնիւ ընթերցողաց կը յանձնարարեմք յատկապէս, փափաքելով որ հրատարակիչն ևս, որ մեծ ծախսուց կենթարկի, քաջալերուելով՝ յետ այսոցիկ ևս չարունակէ այսպիսի հրատարակութիւններ հանել ի լոյս, որոց ո՛չ սակաւ պէտք ունինք՝ կարելի եղածին չափ խափանելու համար սրտի և մտաց ապականարար վէպերու հրատարակութիւնն, որք վերջին ժամանակներս չա՛տ կը տեսնուին մեր Ազգին մէջ ալ։

Յիշեալ վէպերու բաժանորդագրին կ՚ի Պոլիս 5 և ի գաւառս 6 ղրուշ ամսականաւ։ Բաժանորդ դրուիլ ուզողները կը հրաւիրուին ի Զիչէք-բազար, թ. 23, ի տպարան Կ. Պալէրեան, և առ լրագրավաճառս։

Գաւառներէն բօսթայի բուլ ալ կընդունուի։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ.Պոլիս 18 Յունիս 1888

Օսմանեան Բանաձիսէ	16– 9
Ռումելիի Երկաթուղի Ֆրանգ	41–75
Թրամուէյ	480
Օսմանեան լիրան 100 դրուշէն	
Մէհմուկէ	108–12
Մէթալիք	102–20
Հինդնոյ	103–20
Վեցնոյ	103–20
Բուպլի Թղթադրամ	9–70
Բուպլի արծաթ	74–
Ռուսիոյ Բուլ	90–25
Դաղղիական վիրա	88– 8
Անգղիական »	111–16
Գրմիկ	51–15

ՍԱՐՏԱՐԻՆ ԼՈՒՐԵՐ

= Հռոմայ Պապն արտօնութիւն տուեր է որ Իտալիոյ թագաւորին երբայր դուքսն Ասսթոյի արմանանայ իբ Հարտզատ քրոջ Հարտզատ դասեր հետ, որ է Լեթիճիա Պոնապարթի իշխանուհին, և է 21 տարեկան, մինչդեռ դուքսը 40 ը անցած է, երկրորդ անդամ կառուանանայ, և առաջին ամուսնէն քանի մը որդի ունեցած է։ Պապն այս արտօնութիւնը տուեր է իբրև բացառութիւն և առարկեր է թէ Դուքսն և իշխանուհւոյն մայրն բացառիկ բարեպաշտութիւն ունեցած են և բացառիկ հաւատարմութիւն առ գահն Հռոմայ։ Յայտնի է թէ Հռոմէական եկեղեցին թոյլ չտար որ մօրեղբօրդուիք իսկ հօրեղբօրորդւոյ հետ ամուսնանան։ Հետևաբար ծայրագոյն բացառութիւն է՝ թագաւորին եղբօր համար եղածը։

= Սերպիոյ կառավարութիւնն օտարոյ ձեռքին առնելով ծխախոտի վաճառանան մեծ աշխոյժն, ինքն սկսաւ մատակարարել։

= Ռուսիոյ կառավարութիւնը ծոյլ կուսայ որ կանոյը ալ պարապին դեղագործական արուեստն ուսանի, սակայն պայմանաւ որ իրրև այլ դեղապատ անցնին ամէն քննութենէ, և աշակերտաբեր ընդունող դեղարանք աշակերտ չառնուն։

= Գերմանիոյ նոր գահաժառանգն, կիյոմ անուն, տակաւին մեց տարեկան է, և Պերլին առանձին պալատան մը մէջ պիտի հաստատուի և պիտի ունենայ յատուկ պաշտօնեաներ։

= Անգղիացի Տօքթոր Մաքէնղի, Գերմանիոյ Ֆրէտերիկ կայսերը դարմանելուն վարձք ընդուներ է 25000 անգղիական ոսկի։

= Թունուզի իշխանութիւնն՝ որ՝ ինչպէս յայտնի է, Դաղղիոյ գերիշխանութեան ներքև կը դըտնուի, այսուհետև թղթատարական ու հեռագրական յատուկ վարչութիւն և նամականոցմ պիտի ունենայ։

= Ի Ռուսաստ մաքսային պաշտօնեայ մը Ռուսիոյ կայսեր պատկերը դեռևին նետելով նախատուելն համար պաշտօնէ հանուեցաւ, սակայն գերմանական հիւպատոսն՝ որուն յանձնուած է Ռուսիոյ հպատակաց և պատուոյ պաշտպանութեան գործը, չշատանար և կը պահանջէ Թուղարին կառավարութենէն որ այդ նախատանոյ գործին ականատես բոյց անտարբեր դտնուող պուղդար սպայք ալ պատժուին։

= Կալիսիոյ Պղպաժիէ քաղաքին եկեղեցւոյն մէջ կրօնական պաշտամանց առեն կայծակ իջնելով եկեղեցւոյն վերայ, մեծ շըփոթութեան պատճառ եղեր է. 3 հոգի մեռեր, 6 հոգի ծանր և 230 հոգի թեթև վիրաւորուեր են։ Եպիսկոպոսը մեծաւ դժուարութեամբ կրցեր է շփոթութեան առաջքն առնուլ։

= Գերմանիոյ կայսրը, բացման ճառին մէջ երկրին ներքին վիճակին վերայ խօսելով ըսեր է թէ «Զպիտի չնայեմ ընդարձակել կայսերական իշխանութեան իրաւունքներն, և պիտի պահպանեմ կրօնական խաղաղութիւնը։»

= Պերլինէն Լոնտոն հեռագրեր են թէ Գերմանիոյ կայսեր Յուլիս 4ին բազմաթիւ պարագայ մը ճնշած ու քիչ մը ետքը մեռած էր և մայրն ալ այս պատճառաւ խելագարած։ Դատաւորանն որոշեց նաև որ տղուն ընտանիքը կրօնական ատեանի դիմէ իր անհատական ժառանգութիւն փոխարինութիւն լնդդրելու համար։

= Միջերկրականի անդղիական նաւատորմին առաջնիկայ ամսոյ լրիվն Ագէքսանդրիոյ նաւահանգիստը պիտի երթայ։

= Պիթ-Բաղարի մանեսահիներն Մուսթաֆա տղուն օրը պայտիտի չրջան սաւրչայ մեկնէն առնելու ատենն յանկարծամահ եղաւ։

ՆԷԹԻՃԷԻ ՄԷՐԱՄ ԵՒ ՃԻՆԱՅԷԹ ՄԱՀՄՈՒԼ

Ինչպէս ծանուցած էինք նախորդ թիւերով, ազգագրական Պալէրեան Կարապետ էֆէնտի այս չաբթու ընկերասէր միտեղ հրատարակել յիշեալ երկու վէպերու թարգմանութիւնը տեար առ տեար։

Մրցագրութիւնս հակամէտ չէ առհասարակ ամէն վէպ մեծարդոյ ընթերցման ու քաջալերութեան մատուցանել։ սակայն տեսնելով յիշեալ վէպերուն ո՛չ միայն հետաքրքրական, այլև բարոյապից ու հրահանգիչ բովանդակութիւնն, և միանգամայն դոյզն ու ճարտար թարգմանութիւնն ի հայատառ թուրքերէն, ամենայն հաճութեամբ մեր ազնիւ ընթերցողաց կը յանձնարարեմք յատկապէս, փափաքելով որ հրատարակիչն ևս, որ մեծ ծախսուց կենթարկի, քաջալերուելով՝ յետ այսոցիկ ևս չարունակէ այսպիսի հրատարակութիւններ հանել ի լոյս, որոց ո՛չ սակաւ պէտք ունինք՝ կարելի եղածին չափ խափանելու համար սրտի և մտաց ապականարար վէպերու հրատարակութիւնն, որք վերջին ժամանակներս չա՛տ կը տեսնուին մեր Ազգին մէջ ալ։

Յիշեալ վէպերու բաժանորդագրին կ՚ի Պոլիս 5 և ի գաւառս 6 ղրուշ ամսականաւ։ Բաժանորդ դրուիլ ուզողները կը հրաւիրուին ի Զիչէք-բազար, թ. 23, ի տպարան Կ. Պալէրեան, և առ լրագրավաճառս։

Գաւառներէն բօսթայի բուլ ալ կընդունուի։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ.Պոլիս 18 Յունիս 1888

Օսմանեան Բանաձիսէ	16– 9
Ռումելիի Երկաթուղի Ֆրանգ	41–75
Թրամուէյ	480
Օսմանեան լիրան 100 դրուշէն	
Մէհմուկէ	108–12
Մէթալիք	102–20
Հինդնոյ	103–20
Վեցնոյ	103–20
Բուպլի Թղթադրամ	9–70
Բուպլի արծաթ	74–
Ռուսիոյ Բուլ	90–25
Դաղղիական վիրա	88– 8
Անգղիական »	111–16
Գրմիկ	51–15

յիւք կուղևորի ի Պետրսպուրկ, և քանի մ՚օր պիտի մնայ անդ։

= Պարսից Շահն, որոյ աղատասիրութիւնն ու ժողովրդասիրութիւնն հռչակեալ է, փափաքելով առաւել ևս բարեկարգել և ապահովել երկիրն, այս օրերս հրովարտակ մը հանած և հրատարակած է որ կարդայուի երկրին մզկիթաց ու աղօթավայրաց մէջ ի գիտութիւն ժողովրդեան, նորա բոլոր տրամադրութիւնք անթերի դործադրուին, և զանցառուք պատժուին ա՛նպաիսի խըստութեամբ որ զարմանք պատճառէ դիտողաց։ Սոյն հրովարտակին, որ դեռպանաց ալ հաղորդեցաւ, Պարսկաստանի հանային ընակչաց, ինչպէս նաև մեր սիրելի աղգայնոց խորին գոհունակութիւն պատճառած է։ Աւանիկ հրովարտակին հայերէն թարգմանութիւնը։ – «Բարձրաստէն Աստուած արդարութեան և բարութեան աղբիւր կացուցած լինելով զմեզ, և դործադրիչ Իւր բարձր պատուիրանաց, և յատկապէս մեզ յանձնած լինելով Պարսկաստանի ժողովրդեան կենաց և ընչից ապահովութիւնը, մեք, այս մեծ բարութեան համար երախտագիտութեամբ, և ի գործադրութիւն այս աւագ վստահութեան, պարտականութիւն կը համարինք գործադրել հաւատով արդարութեան օրէնքները, պաշտպանութիւն ընձեռնուլ համար մեր ժողովրդեան կենաց և ընչից, ընդդեմ հարստահարչաց ձեռնձգութեանց։ Պարտականութիւն կը համարինք նաեւ յարատեւել Մեր այս որոշման գործադրութեան մէջ, որպէս զի Պարսկաստանի ժողովուրդը, կենաց և ընչից ապահովութիւն վայելելով, լիակատար վստահութեամբ պարապի ամեն արուեստիւ և ձեռնարկութեանց որք քաղաքակրթութեան հիմերն են և երջանկութեան ու բարգաւաճման աղբիւրներն։ Հետևապէս, ի տեղեկութիւն և յապահովութիւն Մեր ամեն հպատակաց, և յայտնի պատճառաւ Մեր վեհապետական մտադ արքունութեան, բարութեան և արդարութեան, այսու Հրովարտակիս կը ծանուցանենք Պարսկաստանի ամեն ժողովրդոց թէ իրենց կեանքն ու ստացուածքը լիովին երաշխաւորուած են, թէ աներկիւղ կրնան ի գործ դնել իրենց ստացուածոց վրայ սեփականութեան ամեն իրաւունք, կըրնան ձեռնարկել ամեն մեծ գործ որ դրամագլխոց հայթայթում կը պահանջէ, կամ ընկերութեանց կազմութիւն. օրինակի համար հանրային շինութիւններ, ճամբայներ և.ն. և թէ ամեն այսպիսի ձեռնարկներ գոհունակութիւն և հաճոյք պիտի պատճառեն Մեզ, և Մեր խնամոց և պաշտպանութեան առարկայ պիտի լինին։ Ի մի բան, կը կրկնենք թէ ո՛չ ոք իրաւունք կամ իշխանութիւն պիտի ունենայ Մեր հպատակաց կենաց և ընչից ձեռն ձգելու, կամ զանոնք պատժելու և նեղելու, ի բաց առեալ պարտ ու պատշաճ գործադրութեամբ երկրին քաղաքային և կրօնային օրինաց։»

1305 Ռոժալն (1888 Մայիս)

= Ըրոյց կայ թէ մծտերս պիտի տեսակցին Գերմանիոյ և Ռուսիոյ կայսերք։

= Աւստրիոյ մէջ մեծաւ գոհունակութեամբ կը նկատուի՝ Աւստրիոյ գահաժառանգ իշխանին հետ Գերմանիոյ կայսեր անձնական եւ մտերմական սերտ յարաբերութիւնը։

= Կըսուի թէ Թրանսվալեանոյ դիւղացւոց մէջ խռովութիւնք ծագած են։

= Աւստրիոյ կայսեր գահակալութեան 40դ տարեդարձին առթիւ, չեխ երեսփոխան Պ. Հըլուպա 200000 ֆիօրին (20000 անգղիական լիրա) նուիրեր է՝ ի փրկակ գիտութեան եւ գրականութեան չեխական Ակադեմեայի մը հաստատութեան համար։

= Գերմանիոյ երեսփոխանաց ժողովը բացուեցաւ ամսոյս 12ին։ Ա.յս առթիւ ընթերցեալ կայսերական ճառին մէջ ըսուած է թէ՝ ամենուրեք խաղաղասիրական տրամադրութիւնք կան, եւ թէ՝ Աւստրիոյ հետ հաստատեալ դաշնակցութիւնն, որոյ նպատակը պարզապէս պաշտպանողական է, կը պահուի իբրեւ հիմն հաւատարակշռութեան Եւրոպիոյ։

= Փարիզի Օսմաննեան դեսպանն ամսոյս 11ին երեկոյ չքեղ հացկերոյթի մը տուեր է ի պատիւ Հանրապետութեան նախագահին եւ նորա ամուսնոյն, ի ներկայութեան 22 հրաւիրելոց։ Դեսպանատունը ներքուստ եւ արտաքուստ զարդուք ու լուսով ողողուեր է։ Հունգարացի գնչուներու համբաւաւոր նուագախումբը նուագեր է հացկերութեան ատեն։

= Աւստրիոյ կայսրն հետեւակ զօրաց 34դ գնդին պատուակալ ըլլա անուանեց զինքեան Բ. կայսր Գերմանիոյ, եւ հրամայեց որ Հիւսարաց 7դ գունդն այսուհետեւ կոչուի Բ. անունը կրէ։ Ռուսիոյ կայսրն ալ Պետրոպաւրկի կրընասպիւէ զօրաց գնդին պատուակալ ըլլա կարգելով՝ մեծարեց զնա։

= Ժամանակիս ամենէն հրաշակաւոր ճատրակ խաղացողներէն մին, Գերմանացի Պ. Զուքըրթորթ անցեալ երեքշաբթի իրիկուն ճատրակ խաղալու ատենն յանկարծ ինկեր մարեր եւ մեռեր է։

= Գերմանիոյ կայսրն հրամայեր է՝ արտասովոր դեսպանաց միջոցաւ տէրութեանց ծանուցանել իւր գահակալութիւնը։

= Գերմանիոյ կայսրը, Դաշնիոյ հանրապետութեան նախագահին կոդմանէ առ ինքն ուղղեալ շատակցական եւ միանգամայն շնորհաւորական հեռագրին պատասխաներ է՝ շնորհակալութիւն հեռագրելով եւ ինքն ևս այս առթիւ վասնզ յայտնելով առ ի պահպանութիւն բարեկամութեան Դաշնիոյ եւ Գերմանիոյ։

= Գերմանիոյ կայսրն՝ երկրին նշանաւոր զօրավարներն ընդունելու առթիւ, խաղաղութեան պահպանութեան համար յոյս յայտներ, եւ ըսեր է թէ քաջայոյս է որ բանակին կատարեալ վստահութիւնը վայելելու արդելք չը պիտի լինի իւր երիտասարդութիւնը։

= Յառաջիկայ աշնան ի Քէօնիկսպէրկ պիտի կատարուի Գերմանիոյ կայսեր եւ կայսրուհւոյն թագադրութեան արարողութիւնը։ Թէպէտ անհրաժեշտ չէ այս արարողութիւնը Գերմանիոյ կայսերական տան համար, բայց կիսյոմ Բ. ուղեր է՝ ժողովուրդը դբաստելու համար։

= Ռուսիոյ կայսրն առաջիկայ Մայիսմեայ ամսոյն մէջ Պարիզ կուգայ։

= Նորվեկիոյ նախարարապետ Պ. Ոիխմեէր ինքզինքն սպաննեց ի Սթոքհոլմ, ըհվոլվըր պատպելով բերանին մէջ։

= Մի տարեալ նահանգայ հանրաժողովութիւնն որոշած է՝ ի պաշտօնէ մանակցիլ Փարիզի տիեզերական Արուեստահանդիսին, եւ Ուիլիըմ Թրանըլին զօրավարը պատուիրակ կարգած է՝ Արուեստահանդիսին մասնակցող ամերիկացւոց չահուց հսկելու համար։

= Ի Սաքսոնիա բաւական յաջող կերևին վարդի մշակութեան փորձերն, որ քանի մը տարիէ հետէ կը կատարուէին ի Ձեռն Շիմմել ընկերութեան Լայբցիկի եւ Նիւ-Եորքի։ Սոյն երկրին կլիմային թէպէտ Պալքանեան թերակղզւոյ կլիմային չափ յարմար չէ մշակութիւն վարդի, սակայն արտադրած վարդերը լաւ հոտ ու համ ունին, եւ վարդիւղն առաւել կարժէ քան Օսմաննեան երկրին վարդիւղն։

= Գերմանիոյ վաճառանոց Թրէսերիկ կայսրն ամուսնոյն համար կատակը է իւր պալատն ի Պերլին Ընդ Թրէնենօք պողոտային վերայ եւ Շարլոթենպուրկի դղեակն։

= Ամսոյս 8ին տեղի ունեցաւ Պարսկաստանի մէջ չինուած առաջին երկաթուղւոյն բացման հանդէսն։ Ա.յս գիծն 15 քիլոմեթր երկայնութիւն ունի եւ Թէհրանէ կերթայ մինչեւ Շահ-Ապտ-իւլ-Ազըմ։

= Ռուսիոյ կայսրն՝ որուն ալիբելի է ձկնորսութիւնն, ի Յինլանտիա ագարակ մը գներ է Բիւմ մէնէ ձկնաւէտ գետոյն եղերայ վերայ, եւ առաջիկայ ամառ կայսրուհւոյն եւ որդւոյն հետ պիտի երթայ անդր։

Ա.ՅԼ ԵՒ Ա.ՅԼ.Ր

×× Շաբթական պալատական ծախք։ – Անգղիոյ եւ Նիւ-Եորքի մէջտեղ երթեւեկող շոգենաւ (չոգենաւ) միոյն, մէկ տարւոյ մէջ սպառած ուտելիք ու խմելիքն է։ Ոչխար՝ 4656. եղն՝ 2474. գառն՝ 1800. բադ՝ 4250. հնդկահաւ՝ 2200. սագ՝ 2000. հորթիկ՝ 200. եւն. եւն։ Մոխրոտ՝ 1 թօնօ. պըղպեղ՝ 1/4 թօնօ. 7814 չիլ ըուզի. 500 թօնօ ալիւր. 900 թօնօ վարթաթէս. 50 հազար նկանակ հաց եւ 20 թօնօ ըուչէյըը. 5000 աման անուշեղէն. 12 թօնօ նարինջի ապոյշ. 20 թօնօ չամիչ՝ թուզ՝ արմաւենի եւ հաղարներով դամիւղ խաղող, դեղձ, խնձոր, նարինջ, եւն. 15 հազար կալօն շամբանեը եւ Քլարէդ գինի. 175 հազար չիչ հանքայուր. 35 հազար չիչ ոգելից ըմպելիք եւ կէս միլիոն չիչ գարեջուր։ Մինչդեռ վերոհշանակեալը վար կիջնեն, 50 հազար գլանիկներու ծուխերն վեր կելնեն. հաշուի չառնելով այն հազարաւոր ծխելիքներն զոր ճանապարդք միաոեղ կը բերեն շոգենաւ։ Ասոնցմէ զատ, 85 հազար լիտր ծամելու ծխախոտ, 20 հազար լիտր թէյ, 75 հազար լիտր սուրճ, 200 հազար լիտր շաքար եւ անսահման կաթ, միլիոնաւոր հաւկիթ, տակառաչափներով ձուկ, հազարաւոր տուփ սոյրթ։ Ահա ասոնք են որ մէկ շոգենաւ մը կրնայ տարուան մէջ։ Բարի ախորժակ կը մաղթենք ուղեւորաց . . .։

××× Պաշտպան և սոխոցել օշըք. – Ցայսոնի է թէ ամերային օդթագին աւուրց մէջ կը գործածուին ասոնք, և չատերը չափազանցութեամբ վարուելով՝ լեարդի, կողի, և այլ հիւանդութեանց ենթակայ կը լինին։ Կարելի չէ բոլորովին արգելուլ ասոնց գործածութիւնն, վասնզի տաք օրերու մէջ չատ հաճելի են. սակայն առի զգուշութիւն պէտք է ուշադրութիւն ընծայել հետևեալ միջոցներուն։ – Որչափ հնար է՝ պաղպաղակը քիչ ուտելու և օշարակը քիչ խմելու է։ – Երբ այսպիսի պաղ բաները ուտուին կամ խմուին, ցրտութիւն զգացուած ին պէս մարմինը չարժման մէջ դնել անդրաժեշտ է։ – Երբ մարմինն ա՛ր և պատճառաւ քրտնած կամ տաքցած է, զգուշանալու է պաղ բաները ուտել կամ խմելէ. և այս զգուշութիւնն առաւել ընել պարտին իդական սեռն և տղայք։ – Պաղպաղակ և ուրիշ ի՛նչ որ պաղ է, պէտք է քիչ քիչ բերանն առնուլ, պահ մը բերնին մէջ պահել և ապա կլնել, որով ո՛րևէ ջլաս չպատահիր։ – Անօթութեան կամ մարսողական գործողութեան սկզբնաւորութեան ատեն ո՛չ պաղպաղակ ուտելու և ո՛չ պաղ օշարակ խմելու չէ։

×× Լէմոնը։ – Մըլլնոյ արշաւանքէն ու ճլուսէն ազատելու համար, պէտք է լիմոնը երկուք կտրել, և դնել ա՛յն տեղ, ուր գոնդագունդ կը թափին։ Լէմոնին ներկայութիւնը կրնայ այդ անասնիկներուն բոլորովին բացակայութեան պատճառ լինիլ։

××× Մանկան անուշը։ – Մինչև որ մանկան առաջին ակռաները բուսանին, այսինքն՝ 6 տարեկանէն մինչև Շգ, պէտք է որ անուշդը միայն մօրը կաթը լինի. եթէ այս կարելի չէ՝ կաթնատու մը ընտրել հարկ է։ Պէտք չէ հայ, փոկեղ, միս, կանանչեղէն, պտուղ և այլ այսպիսի ուտելիք տալ մանկան՝ ծննդեան առաջին ամսոց մէջ. վասն զի աւունք մանկան առողջութիւնը կը խանգարեն։ Աչխատելու է որ ցերեկներն 2 ժամն անգամ մը, իսկ գիշերներն աւելի քիչ անգամ կաթ տրուի մանկան։ Եթէ մայրը կաթ չունի, կովու կամ այծի կաթ տալու է՝ քիչ մը չաքար և մաքուր ջուր աւելցընելով կաթին մէջ։ Մանուկն երբ հընդամեայ լինի՝ անշուշտ կը տրուի կաթը։ Մանուկն երբ 6-7 տարեկան լինի, կաթին հետ թեթև ապուր, կամ կաթին հետ եփուած ճերմակ հաց, ֆէրինճ-ուոնա, ֆոխնեա ուոնա, կամ նապեօք կը տրուի։ Եթէ այսպէս անուշդ տրուի մանկան՝ մինչև որ մէկ տարեկան լինի, յետոյ ստինքէ կտրելու համար մեծ դժուարութիւն չպիտի։ Մանուկն ստինքէ կը կտրուի, եթէ 12-16 նախնական ատամունք երեւին և ինքն առողջ վիճակի մէջ գտնուի։

×× Ամէն տարի 6000 հատ նոր հրատարակութիւնք կը տեսնուին Անգղիոյ մէջ։

×× Ամէն աշխարհի ամէն կողմը կը գործածուի, և ո՛ւր որ չկայ՝ շատ թանկագին է։ Ամերիկէի այլ և այլ կողմերը մարդ մը ափ մը աղի վոխարէն կը վաճառուի։

×× Կրծող 25000 տեսակէն աւելի է աշխարհի մէջ։

×× Եզեռ գլխոն լէօ ծախք եղած է Անգղիոյ ազգային խորհրդարանին չինութեան համար։

×× Լուցկըտուփը նախ ի Զինաստան հաստատուած է։ Ցիշեալ երկրին մէջ 1000 տարիէ հետէ լըսուիր կը հրատարակուի։

××× Մկանց կծկողունը կը հրաչակէն քիմիագէտք ոմանք՝ արդար իւղին և կարագին անխառն կամ խառն լինելը որոշելու համար։ Փորձի համար, դանազան տեսակ իւղեր քսելով 12 ամաններու, գիշերը ձգեր են սեղանի մը վերայ. առաւօտուն տեսեր են որ մուկերը լղած մաքրած են 10 ամաններն, և երկուքին քնաւ մերձեցած չեն, որով հաստատուեր է թէ 10ին պարունակած իւղն անխառն է, իսկ երկուքինը՝ խառըն և խարդախեալ։

ԿԻԻԼՏԷՍԹԷԻ

Մ–հաբբէթ Բէօղէյ էֆ դէյէ Բէօղէյ

Սոյն ձեռագիրը նամականին տաճկաբան և թարգման Աբիկեան Միհրան էֆէնտիի գործն է, որ քանիցս ապառած լինելով այս անգամ վերատին տպուած է, և կը պարունակէ զանազան Մուրհակ, Պայմանագիր, Փոխանորդագիր, Ընկալագիր, Աղերսագիր, դատական ամէն տեսակ Խնդրագիր, Նամակ, Շնորհաւորագիր, Ծանձնարարագիր, Հեռագիր, Կտակագիր, Վկայագիր և այլ խիստ պիտանի գրութիւններ, ընդ ամենը 284 հատ։ Գինն է 6 ղրուշ. զեղչ կը լինի 20 առ հարիւր։

Մամուլ խափանեալ զաւեշտաբերի արտօնատէր Գէորգ էֆէնտի Այվազեան՝ Միխիթարեան ընտիր ձիթախիւղ և օճառ, Թէնեուտէն պատուական գինի և Իզմիրէն ընտիր օղի բերել տուած է, և ածան գնով կը վաճառէ Ղալաթիա Բէնէչէնպիհ-սպաղար Իոխի խան։ Ասոնցմէ զատ, յատկապէս բերել տուած է Կիպրոսի պատասական գուինտարիան, Եւրոպայէն ժօրժ Սալամն եղբարց ընտիր գոնեաքները թէ՛ չիչերով և թէ՛ տակառով, և Իսպիւտարի ընտիր Զավուշ-իւզիւմիէն ձերմակ գինի։ Նաև ամենաընտիր ձիթապտուղ։ Ցառաջորդիք մեծապէս գոհ կը լինին ասոնց թէ՛ ընտրութեան և թէ՛ ածանութեան համար։

ԲԱՌԱՄԵԱՑ ՏԵՂԵԿԱԴԻՐ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

Ս. ՓՐԿՉԻ Ա.ՋՄ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

(1883 Յունուար 1—1886 Դեկտ. 31)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ս. ՓՐԿՉԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Ազգային յիսնամեայ նկարագիրը

Դբեց Բէօղոնդ Քէլէճ

Սոյն երկու հրատարակութիւնք ի միասին կը վաճառուին Ընտատա Ս. Փրկչի Հիւանդանոցին, և գին մէկ քառորդ Օսմանեան ոսկի։ Կեդրոնատեղին է Հիւանդանոցի Հոգաբարձութեան գրասենեակը, Կ. Պոլիս, Մեծ Նոր-Խան, մինչնայարկ Թիւ 48, 49, 50։ Ամէն գրավաճառաց քով կը գտնուին։ Հիւանդանոցի Հոգաբարձութեան կնիքն չկրող օրինակներն անվաւեր են։

Պահապան Հրեշտակ Պանդուխը։ – Հեղինակ՝ Տէրեան Սեդէթ-ի Խոսրով։ – Թուբճանեց Գրքերու Պ. Տէլեզեր։ – Հետաքրքրաշարժ և հրահանգիչ վէպ մ'է։ կը վաճառուի ի գին 8 ղրուշ։

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՐՏԻԶ

Գ Ր Ե Ց

Տ. Խորէն Արքեպիսկոպոս Մխիթարեան

Աւագնորդ Եղեռնի

Նորին Գերապատուութեան սոյն նոր գործն, որ քնական գիտութեան և բնական պատմութեան վրայ կը լսօսի ժողովրդեան հասկանալի լեզուաւ, Զմիւռնիոյ Տէտեեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայուած է մաքուր տպագրութեամբ և կը վաճառուի քոլոր գրավաճառաց քով ի գին 7 դահեկան։

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս· ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԵՒ

Ա.ՂԹԱՄԱՐ ՈՒ ՍԻՍ

Գեր· Տ· Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան գրած է Հայաստանեայց Մ· Եկեղեցւոյ ընդհանրական հայրապետութեան, և Աղթամարայ ու Սսոյ կաթուղիկոսութեանց հաստատութեան, իրաւասութեան և պարտուց ու պաշտաման վրայ, պատմութեամբք արձանագրութեամբք և հին ու նոր վաւերական պաշտօնագրովք հաստատելով զամենայն։ Ընթերցողն լիուլի ծանօթութիւն կստանայ Հայաստանեայց Հայրապետութեան և Աղթամարայ ու Սսոյ անցեալ և ժամանակակից վիճակաց վրայ։ Գեր· Իզմիրլեան քալ հետազօտած ու խնաստասիրած է զայս ամենայն, և լուսաւոր ծանօթութիւններ կընծայէ հետաքննին Հայոց։ Գրքին սկիզբը դրուած ցանկը աչքէ անցուցողն պիտի տեսնէ, թէ ո՛րչափ նշանաւոր անյքեր նշանակեալ են խնամով, և քանի՛ նուիրական ու մեծարելի է Հայկական հարստութեանց միակ մնացորդն եղող Հայրապետութիւնն։ կարժէ, որ ամեն Հայ թանգարանի մէջ գլխաւոր տեղ մը բռնէ այս Գիրքը։

Կ.պոլսոյ լրագրոյս գրասենեակը, Կ· Պոլիս Պալըգ-բազար Նաֆիյէ-խան վերի յարկ Թիւ 16· Պաղչէ-գաբու Ջրավաճառ Պօղոս աղայի խանութը։ կը բաղխանայ 1300 երեսէ։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՈՒԿ ՀՈՒՎԼՈՒԱՅԻ

Լեարդի, ստամոքսի և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, և ամեն ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար· կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անջատաւորութեանց հետքերը։ Սըրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մը ունի· արիւնը մաքրելով՝ նորա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ և դարձրելով կենսական գործարաններն կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբ տրամադառնութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լցուած կաղեր, գլխի ցաւեր կվանէ, մարսողութիւնը կչափաւորի, և մարմինը մաքրելով բոլոր այն աղտեղութիւններէ որ չատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ՝ ուժեղ և բնական դիրքը կդնեն։

ONCUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒՎԼՈՒԱՅԻ

Մարթային հիւանդութիւն և վերք բուժելու մասին ունեցած պալատական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը· հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (շիրխիճնջէ), սրունկի և ստեանց վերքեր կա՛մ բոլորովին կանգնին և կա՛մ կլաւանան· օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բարախման, մանաւանդ յօդացաւ (եհ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սքրպաձա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ կը դիմագրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփ վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մանաւորապէս Պաղչէ-գաբու Թաշ-խանի կողմերը Պ. Գասպարեանի դեղարանը, Թիւ 7, կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն ուսքիթար Հոլլոուէյ ի Լոնտոն Օքսֆօրտ փողոց Թիւ 533։

ՏՆՕՐԻՆ ԵՒ ՏԷՐ

Հ· Ս· Ա Լ Ա Ձ Ա Ձ Ե Ա Ն

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԱՊԵՏ ՊԻՊԻՐԵԱՆ

Կ· Պոլիս Զիչէք-բազար Թիւ 32